

մինչև ժԲ. դարու վերջերը, Դաւթի դրան մօտի եկեղեցին եւ ուրկանոցը գոյութիւն ունէին. անկէ յետոյ պատմական տեղեկութիւն կը պակսի. հաւանաբար քանդուած են Սալահէտտինի գրաւման ժամանակ, թէև աւերակաց վրայ շինուած խարխուլ սենեակներուն մէջ, ուրուկները բնակած են մինչև իրենց այլուր փոխադրութիւնն, ինչպէս կը վկայեն Աստուածատուր եպօ. (Տէս «Ժաւնանկագր». Պատմ. Երաղմի.» Ա. հտր. էջ 50, և Մկրտիչ վրդ. Արծրունեան, «Ասորագր. Երաղմի. էջ, 184), երկուքն ալ Ս. Յակոբայ միաբան:

#### 4. Ի՞նչպէս կը մասակարարուէին վանքն եւ անոր Ուրկանոցը.

Այդ մասին յիշատակարան չունինք. բայց ազգային պատմութեան տուիքները զայն կրնան մեզ լուսաբանել: Յայտնի է թէ Ս. Ներսէս Պարթև հայրապետի օրով, առաջին անգամ հիմնուեցան ուրկանոցները Հայաստանի մէջ. ինչպէս կը վկայէ Բիւզանդ Փաւստոս (Տէս Պատմ. Հայոց, էջ 76): Աշտիշատի (365), Շահպիվանի (447), Գունի Գ. (648) ժողովներու կանոնները բացայայտօրէն կը պարզեն թէ ո՞րպիսի եկամուտներով պիտի մատակարարուէին Հայոց ուրկանոցները. անոնք կը կազմէին սահմանեալ տուրքերը, այր և կին դատապարտեալ սոսկականներուն՝ ուրկանոցներու կանոնական ծառայութեանց արդիւնքները. զբրամական արդիւնքները այն տգատանիին՝ որոնք չէին յօժարեր երթալ ուրկանոց, կամ այլ բառով՝ գոյննոց. նաև ուրիշ հողային արդիւնքներ և բարեպաշտական նուէքներ:

Ռշտունեաց վանքի հիմնարկութենէն մինչև Ը. դար, Ռըշտունեաց նախարարութիւնը կը մատակարարէր իր հիմնարկած նոյն վանքը ու անոր ուրկանոցը, ինչպէս ուրիշ նախարարութիւնները՝ թէ՛ Հայաստանի և թէ՛ Ս. Քաղաքի մէջ, իրենց հիմնարկած վանքերն ու եկեղեցիները կը հողային: Ռշտունեաց մատակարարութիւնը տեւած է մինչև Ը. դար, ինչպէս գրեցինք, այն պատճառաւ որ Ռշտունիք նոյն դարուն կը տկարանային ու անոնց հողերը կը դառնային Արծրունեաց աւատը: Շատ հաւանական է որ Ռշտունեաց անկումէն յետոյ Երուսաղէմի ուրկանոցը կը մատակարարուէր Հայաստանի ուրկանոցներուն ի վա-